

«ՀՐԱՇՔ»—ԶՐՈՒՅՑՆԵՐԸ ՄԱՐՏԻՆՈՍ ՕՊԱՎԻԱՑՈՒ
«ԳԱՒԱԶԱՆԱԳՐՔԻ» ՀԱՅՆԵՐՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայ միաբանների լատիններենից կատարած թարգմանությունների շարքում պատմագրական ամենանշանակալից գործը Մարտինոս Օպավիացու (Լեհացու) երկի 1348—1351 թթ. Ավինիոնում ներսես Պալիանենցի կատարած թարգմանությունն է, Բայց մինչև վերջերս մեր բանասիրությունը, ժխտական վերաբերմունք ունենալով ողջ միաբանական գրականության նկատմամբ ընդհանրապես¹, բացառություն չի արել նաև այս թարգմանության համար։ Միջնադարյան լատինական մատենագրության մեջ Մարտինոսի «Ժամանակագրությունն քահանայապետաց և կայսերաց» աշխատությունը² կարևոր տեղ է զբաղեցրել և XIV—XVI դդ. կրթված եվրոպացիների համար եղել է ամենահեղինակավոր պատմական տեղեկատուն։ Պահպանվել են դրա հարյուրավոր ընդօրինակություններ։ XVI դ. հրատարակվել է երկու անգամ, նույն սկզբունքով հետագայում կաղմվել են բազմաթիվ երկեր, որոնք ստացել են «մարտինոսյան ժամանակագրություններ» ընդհանուր բնորոշումը։ Գրվելուց կարճ ժամանակ անց գիրքը թարգմանվել է իտալերեն, գերմաներեն, հայերեն, չեխերեն, ֆրանսերեն, իսպաներեն և հունարեն³։ Մարտինոսի աշխատությունը դասվում է ընդհանուր (տիեզերական) պատմությունների շարքը և այդ տեսակին պատկանող իր նախորդների խստիվ ծրագրով արված քաղաքում—համառոտումն է։ Այն պապական արքունիքի կողմից պաշտոնական ճանաչում գտած և պատմության հանձնարարելի դասագիրք էր, ուստի և՛ ընդօրինակությունների, և՛ թարգմանությունների (բացի հայերենից), և՛ հրատարակությունների շատությունը բացատրելի է։

Միջնադարյան պատմագրության ժամանակակից տեսությունների մեջ Մարտինոսի գործը քննադատվել է՝ իբրև քաղաքական և գրեթե նորություն չբերող, չափազանց համառոտ և ուրվագծային, սխալ թվականներ հաղորդող ու զանազան առասպելների հավատ ընծայող աղբյուր⁴։ Հայ բանասիրության մեջ, երբ առիթից առիթ խոսվել է Պալիանենցի թարգմանության մասին, իբրև նրա առաջին և ամենակարևոր թերություն, մատնանշվել է նկարագրված հրաշքների ու առասպելների շատությունը։ Օրինակ՝ նոր հայկազյան բառարանի աղբյուրների շարքում թվարկված է. «Ֆրա Մարթին՝ Փոլաք պատմիչ կոչեցեալ, որ ճառէ դկայսերաց և զքահանայապետաց Հռովմայ՝ անհարթ ռճով, ի լատին բարբառ՝ խառն ընդ անհաւատի կամ սուտ լուսւ։ Ոչինչ ընդ-

¹ Այդ վերաբերմունքի հանգամանալի քննությունը և գնահատականը տե՛ս Լ. Խաչիկյան, Քոնսյոյի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը (3 ով հա ն ն ե ս Ք ո ն ե ճ ի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 8—39)։

² Օգտագործում ենք բնագրի վերջին (գիտական) հրատարակությունը. Martini Oppaviensis, Chronicon pontificum et imperatorum, Ed. L. Weiland, („Monumenta Germaniae historica... Scriptorum“, t. XXII, Hannoverae, 1872, p. 377—482). Այսուհետև Mart. համառոտմամբ այս գիրքը կնշեմք շարադրանքի մեջ։

³ Մանրաման, բայց ոչ ամբողջական մատենագիտություն տե՛ս A. Potthast, Bibliotheca Historica Medii Aevi..., Band I, Berlin, 1896, S. 771—772 (այսուհետև՝ Potthast)։

⁴ Ottokar Lorenz, Deutschlands Geschichtsquellen im Mittelalter, Band I, Berlin, 1886, S. 3, 33, 49, 62—64, Band, II, Berlin, 1887, S. 10—21.

հատէ և հայ թարգմանութիւն ներսիսի Պալիանց ունիթոսի ի ԺԴ դարու...»⁵: կամ՝ «Իբրև պատմական գրված մը, բաց ի ազգայիններն (Պալիանենցի հայկական մուծումներէց—Յ. Վ.), խիստ քիչ է արժեքը ուղղադատ բանասիրութեան առջև, որովհետև նշմարտիւն հետ առատապէս ալ խառը ավանդած է, անոն և անհատուկ կերպարանքով»⁶: Ա. Հովհաննիսյանը, առաջին հերթին նկատելու ունենալով Պալիանենցին, գրել է. «Հայ ունիտորների գրական վաստակը մեծ չէ ընդհանրապես, եթե մի կողմ թողնենք նրանց անպետք թարգմանությունների երկար շարքը»⁷:

Բնագրի և թարգմանության մասին հակասական վերաբերմունքը բացատրվում է դրանց տարբերություններով: Եվ, իրոք, հայերենը բազմաթիվ էական մասերում շեղվում է լատիներեն բնագրի տպագրված ու ձեռագրացուցակներում նկարագրված տարբերակներից: Հաճախ դժվար է լինում որոշել՝ որեւէ տարբերություն բխում է լատիներեն հիմքից, թե առաջացել է թարգմանչի նախաձեռնությամբ: Դրանց մի մասի ծագումը հնարավոր է պարզել բնագրագիտական քննությամբ և օժանդակ փաստարկներով, իսկ շատերը մնում են չբացատրված⁸: Առաջինների թվին պատկանում են և խնդրո առարկա հատվածներն ու բնագրերը, որոնք պարունակում են առասպելախառն և հրաշապատում զրույցներ:

Այսպես, հին կամ նախակայսերական Հռոմի պատմության բաժնի⁹ ավարտի մասում հայերենն ունի «Պատմութիւն Աղէկսանդրի մեծի» խորագրով մի հատված¹⁰, որը բացակայում է լատիներենում (հմմտ. Mart., 406⁵⁵) և սկսվում է այսպիսի մուտքով. «Եւ քանզի վերոյ պատմեցաւ զթագաւորացն և զգօնսուկոսացն ուրպիսն Հռոմա՝ զպատերազմունսն և զիրս նշանաւորս և հիանալիս, որ եղեն առ նոքօք, պարտ ապա իսկ վարկա սակաւ ինչ զմեծէն Ալէքսանդրոսէ, որ եղև ընդ ժամանակին գօնսուկոսացն Հռոմա, նայ և զիրս իսկ եղեալս առ նովա յիշել աստ, զորոյ զկատարեալ պատմութիւնն յիւր գիրս իսկ եղեալս» (1578, էջ 28): Նման սկսվածք կարող էր ունենալ նաև լատիներեն հիմքը, բայց սա ոճական առումով շատ նման է Պալիանենցի գրչին պատկանող հայ թագավորների համառոտ պատմության սկզբին. «Արդ՝ մասն զի գիրքս առաջակա գաւազանաց կամ ժամանակագրաց... ի հայ թարգմանեցաւ... պարտ վարկայ վերջոյ ինքնակալութեանն Հռոմայեցւոցն և զտէրութեանն լաղիկացոցն զիշխոյութենէն և զթագաւորութենէն Հայոց համառոտաբար շարադրել, նայ և զհայրապետացն իսկ յիւրում տեղին» (էջ 264)¹¹:

5 «Նոր բագիրք հայկազյան լեզվի», հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 15 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Յ. Վ.):

6 Գ. Զարպէանալյան, Պատմութիւն հայերեն դպրութեան ի պետս ուսման ազգային վարժարանաց, Բ, Նոր մատենադրութիւն, Վենետիկ, 1878, էջ 161:

7 Ա. Հովհաննիսյան, Նոր նյութեր հայ ունիտորական պատմագրութեանից («Արարատ», 1914, էջ 1108):

8 Այս հարցերի հստակ լուծումը հնարավոր է միայն հայերեն թարգմանության լատիներեն բնօրինակը գտնելուց հետո, բայց մարտինոսագիտության արդի մակարդակի պայմաններում դա քիչ հավանական է:

9 Սա Մարտինոսի գործում նախաբանի դեր ունի, իսկ դրան հաջորդում են պապերի և կայսրերի պատմությունների զուգահեռ ընթացող բաժինները:

10 Օգտագործում ենք թարգմանչի սեպագիր-ինքնագիր ձեռագիրը (Վենետիկի Մխիթարյան, Մատենադարան, ձեռ. № 1578), որ լի է գրեթե այսօրվա խմբագրահրատարակչական եղանակներով արված առանձին տառերի, բառերի, արտահայտությունների և ծավալուն հատվածների գծավորեթեմների շնչումներով (այսուհետև ձեռագրի համապատասխան էջը կնշվի շարադրանքի մեջ):

11 Երբեմն, եթե Մարտինոսի գործի ընդհանուր ծրագրից արված շեղումը ծագում է լատիներեն հիմքից, Պալիանենցն ալ կերպ է ծանոթագրում: Այսպես. Հովհաննես Զ պապի վարքի վերջում գրված պատարագի կանոնին նախորդում է. «Աստ համառոտաբար զկանոնն սուրբ պատարագին վերցնալ գիրքս. այսինքն՝ եթէ յումմէ որ բան եղև կացուցեալ...» (1578, էջ 132):

Ալեքսանդր մեծի մասին այստեղ պատմվածն ընդամենն այն է, թե նա իր արշավանքների ժամանակ հանդիպել է տարօրինակ արտաքին, բարքեր և ուզմամբարության եղանակներ ունեցող ժողովուրդների, նրանց հաղթելու համար կիրառել է դանադան հնարանքները։ Սրան հաջորդում է «Պատմութիւնք և անուանք ԻԲ (22) թագաւորացն» խորագրով մի այլ հատված, որ նախորդի հետ կապված է ուղղակիորեն և որում պատմվում է, թե Ալեքսանդրը հանդիպել է նաև 22 այլ թագավորների, բայց չի ցանկացել կռվել և հաղթել նրանց, այլ քշել է Կասպից ձոր և ամուր փակել այնտեղ։ Այնուհետև ասվում է, որ նրանցից յուրաքանչյուրն ուներ 80 զորավար, որոնցից ամեն մեկի զորքը 100 հազարանոց էր, մանրամասն բերվում են նրանց տնունները և նկարագրվում նրանց արտառոց բարքերն ու արտաքինը՝ սկսած հում ձուկ ուտելուց մինչև ձեռքի վրա ութ մատ, ճակատին մի աչք ունենալը, անգլուխ և միտանի լինելը և այլն։

Այս հրաշք-առասպելների թարգմանական լինելը կասկածի ենթակա չէ նախ այն պատճառով, որ սկզբում չթարգմանված բառեր թեև չկան, բայց լատիներենի շարադասության կնիքը մնացել է, իսկ 22 թագավորների հատվածում կան նաև մեծ թվով չթարգմանված բառեր։ Այս առումով մի ուշագրավ փաստ մատուցում է նաև բնագիրը, ուր ասվում է, թե Կասպից ձորում երկաթե դռներով փակված 22 թագավորներն ու նրանց ժողովուրդները դուրս կգան Նեոի գալստյան ժամանակ, իսկ դրան հաջորդում է խմբագրման ընթացքում Պալիանենցի շնչած, բայց կարդացվող հետևյալ նախադասությունը. «Եւ այս, որ առաջին գրողն զոռն կու ուտէ, զի երկաթի դռուն Տամուր խափունն է և այն ի բաց կա, և ոչ ոք է արգելած անտ։ Այս ճառս ամենայն սուտ է և հաշմունք» (էջ 29)։ Սա, ըստ էության, վերաբերում է 22 թագավորների ողջ հատվածին և եթե Պալիանենցը նրա հեղինակի մասին խոսում է «առաջին գրողն» անորոշ անվանումով, ապա պետք է մտածել, որ նա հստակ գիտի, թե այս բնագրի հեղինակը Մարտինոսը չէ։ Առավել ևս՝ Մարտինոսի գործը թարգմանողը կանխընտրել նրա հասցեին սուտ է և հաշմունք» քամահարական խոսքը չգործածել։ Ընդհատ, Մարտինոսի գործի Անտվերպենի հրատարակության մեջ, նույն տեղում՝ ինչ հայերենում է, մուծված է Ալեքսանդրին վերաբերող բավական ընդարձակ մի կտոր¹², բայց դա արված է ըստ հանրահայտ Կեղծ Կալիսթենեսի «Ալեքսանդրի վարքի» և նրա պարզ համատեղումն է։ Անտվերպենյան այս հավելման փաստը կարող է հիմք տալ ենթադրելու, թե Մարտինոսի աշխատության ետհեղինակային խմբագրությունների մեջ Ալեքսանդրին և նրա նվաճումներին անդադադունալն ավանդույթ էր դարձել, իսկ հայերենինը այդ ավանդույթի դրսևորումներից մեկն է։ այսինքն՝ ծագում է թարգմանչի ունեցած լատիներեն հիմքից։ Բայց Պալիանենցի ոճին հատուկ պարտ վարկա՝ դարձվածը, մի կողմից, և անհրաժեշտ գրականության¹³ պակասը, մյուս կողմից, թույլ չեն տալիս պարզել այս հարցը։ Ուստի, առկա թողնելով Ալեքսանդրին նվիրված հավելման հեղինակի (Պալիանենց, թե՛ լատիներեն հիմքի խմբագիր) խնդիրը, անցնենք հայերենում դրան հաջորդող և ժանրային առումով բավական համահնչուն մանր բնագրերին։

Դրանցից առաջինն ունի «Յաղագս սքանչելեացն աստուծոյ և պէսպէս հիանալի իրի, զոր գտանին ընդ տիեզերս յայտնապէս» (էջ 31—38) խորա-

¹² Martini Poloni, Archiepiscopi Consentini ac summi pontifici poenitentiarlij Chronicon..., Antverplae..., MOLXXIII (1574), p. 59—77. Բաղելի հրատարակությունը (Mertini Poloni, Archiepiscopi Consentini..., Chronicon..., Basilliae..., MDLIX (1559), p. 13) Ալեքսանդրին նվիրել է ընդամենը մի քանի տող։

¹³ Նկատի ունենք հատկապես՝ P. Meyer, Alexandre le Grand dans la Littérature française du Moyen Age, t. 1—2, Paris, 1886 (տե՛ս Ն. Տաշյան, Ուսումնասիրությունը Ստոյն Կալիսթենես վարուց Ալեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 12)։

դիրը և սկսվում է հրաշքների ու զարմանալի երևույթների հարաբերականության մի բացատրությամբ. եթե թզուկները մեր աչքին փոքր են երևում, ապա նրանց երկրում մեզանից որևէ մեկը հսկա կերևար. մեր աշխարհում էլ հրաշքներ կան, բայց մեր աչքը սովորել է տեսնել դրանք, ուստի չենք զարմանում և այլն: Հրաշքների աշխարհագրությունը շատ լայն է և ընդգրկում է ժամանակի առավել հայտնի երկրները: Դրանք վերաբերում են մարդկանց, բնությանը, նյութերին և կենդանիներին՝ շրջապատող աշխարհի բոլոր տեսակի երևույթներին:

Այս բնագիրը սկսվում է այնտեղից, ուր ավարտվում է Ալեքսանդրի հրաշապատումը՝ ինքնագրի 31-րդ էջում. իսկ սա և սրան հաջորդող 32-րդ էջի թերթը նորոգված է. հինը փոխարինված է XVII դ. նոտրդիր գրչությամբ նոր թերթով: Զեռագրի (էջակալված է՝ որևէ կենտ էջ իրեն հաջորդող զույգի հետ կազմում է մի թերթ) 31—38-րդ էջերը լի են շնչում-սրբագրումներով, այդպես են և հիշված էջ 31—32-ի թերթին նախորդողն ու հաջորդողը: Վերջինիս առաջին էջը (33) սկսվում է շնչված ժամեծ և մանչ բառերով, որը, անկասկած, նախորդ էջի վերջի շնչված նախադասության ավարտն է: Նորոգվածը ձեռագրի երկրորդ մասովն ոչ թե սկզբի կամ վերջի, այլ մեջտեղի թերթներից է¹⁴, ուստի սխալ կլինի մտածել, թե նորոգողն այստեղ վերականգնել է կորած թերթը: Միակ ճիշտ ենթադրությունն այն է, որ հին թերթը շնչումների հետևանքով կեղտոտ է եղել, այդ պատճառով էլ կտրվել և փոխարինվել է նորով, որի վրա ընդօրինակվել է միայն շնչված մասը: Իսկ հին թերթի վրայի ենթագրելի սրբագրումների մեջ, մեր խորին համոզմամբ, հնարավոր կլինի գտնել այս բնագրերի աղբյուրները մատնանշող տողեր:

Ասացինք, որ «Յաղագս սքանչելեացն...» բնագիրը սկսվում է հրաշքի հարաբերականության բացատրությամբ: Հետագա էջերում կա նույնպիսի բացատրություն թարգմանչի շնչած երեք դեպք ևս (էջ 34 և 36): Պալիանենցն այդ տողերը հանել է կրկնաբանություններից խուսափելու նպատակով. իսկ ինչպե՞ս էին դրանք առաջացել, մթն նա. ձեռքին ունենար վերջնականապես մշակված և ավարտուն որևէ աղբյուր, այնտեղ դրանք չէին լինի, որովհետև հեղինակն ինքը վերացրած կլինի նշանակում է, հայ թարգմանիչն այս դեպքում իր նյութը քաղել է լատիներեն աղբյուրներից, որոնք պետք է երեքից ավելի լինեին և որոնք, բնականաբար իրարից անկախ, պետք է ունեցած լինեին հիշյալ բացատրությունները: Ուրեմն, «Յաղագս սքանչելեացն...» բնագիրը ձևավորվել է Պալիանենցի ձեռքով և հենց նրա ինքնագրի մեջ: Հետևաբար, վերջինիս շնչում-սրբագրումներն այդ ձևավորման անհրաժեշտ արտացոլումներն են:

Սրբագրումների մեջ կան ամբողջապես շնչված «հրաշքներ». թարգմանիչն օտարել է այսպիսի տեղեկություններ. եղջերուները լողալով գետն անցնելիս գնում են իծաշարով և յուրաքանչյուրը գլուխը դնում է իր առջևի-նի գավակին, որպեսզի եղջյուրները չարդվեն (էջ 38), գայլը հոտից ոչխար փախցնելիս նրան զգուշությամբ կծում և մեջքին է դնում, որպեսզի ոչխարն անհարկի շարժումներով չթվարացնի ընթացքը (էջ 38), ջրի ափին երաժշտական որևէ գործիքով նվագելիս ջուրն ավելի արագ է հոսում՝ «ի խաղ է ելնում» (էջ 35): Բավական ուշագրավ են Անգլիայի մի ծովափնյա վայրում գտնվող սալաքարերի մասին հաղորդման մեջ արված շնչումներն ու շտկումները, որոնք կարող էին առաջանալ միայն շարադրելիս, գուցե՝ ավելի ընդարձակ բնագիրը համառոտելիս, բայց ոչ երբեք թարգմանելիս (էջ 33): Նույնն են վկայում և Մարդինիայում արդյունահանվող յուրատեսակ աղի մասին հաղորդման սրբագրումները (էջ 36): Այս բոլոր շնչումների առաջացումը՝ կարելի էր պատճառաբանել, բայց մեզ համար էականը դրանց շատությունն է, որը կարող է բացատրվել այսպես. Պալիանենցն իր տեղեկությունները քաղել-

¹⁴ Զեռագրերում սովորաբար մաշվում և պոկվում են մասուկների սկզբի ու վերջի թերթերը:

հավաքել է տարբեր աղբյուրներից, իսկ վերջում ջնջել-հանել է այն ամենը, ինչ, անհարկի է համարել: Եթե սա ամբողջական և պատրաստի որևէ բնագրի պարզ թարգմանություն լիներ, թարգմանիչն այս աստիճան աղատ չպետք է զգար ցանկացած ձևով ջնջել որևէ նկարագրություն, նոր ձևով ու բովանդակությամբ ներկայացնել մի ուրիշը և այլն¹⁵: Բերենք մի օրինակ. «Ի կղզու ՅՀէյէի, որ է անտր քան զՀէյէյանի, ի Նորվուսկին թագաւորութիւնն է կարծեմ, [անա ծառն ոչ երբէք թափեն գտեւեւն: Զայս գտանես յամենայն ուրէք ի ծառնն ճարտար, թրքերն և այսպիսեացն: Նայ և ի նոյն կղզուքն] անտ զվից ամիս տարոյն. այսինքն է՝ զձմեռնաին եղանակն, միշտ գիշեր է և ընդ խաւարի լինի, քանդի տիւն ոչ լինի եթէ ոչ իբր ժամս Դ (4) հաղիւ, այլ ամենայն Ի (20) ժամք գիշեր է» (էջ 36). ուղղանկյուն փակագծերի մեջ առած ընդգծվածը թարգմանի ջնջածն է: Պետք է ենթադրել, որ մշտադաւար ծառերի գոյութիւն մասին տեղեկությունը Պալիանենցը համարել է սլակաս զարմանալի, որովհետև իր իսկ մատնանշած նարնջի և այլ արևադարձային բույսերի մշտադաւար լինելը կիլիկեցի (հատկապես դաշտային) հայի համար սովորական էր, իսկ բեռնային գիշերվա երկարատևությունը նույն կիլիկեցու համար պետք է նորություն լիներ:

Մի այլ հետաքրքիր նկարագրություն ևս. «Որ և զայս իսկ գրեմք, զոր ինձէն լուա ի հաւատալի և պատուելի արանց. զի ի յերկիրն Հռուսաց է ծառ ինչ զոր եթէ [զօրոյ կեղևն իբր գտախտակս հաւեն և սեղուկս և կաղաթս շինեն. անդ, զամենայն գարնանաին եղանակն իբր Դ (4) կամ Ե (5) ամիս ամենայն ոք և կամի գնա ի նոյն ծառն, վասն զի բազում են բնոյ ամենայն տեղիս ծառնն այլն, և ոք ոք կարաւ ջրոյ] հարկանեն սրով [կամ զանակով] զբռն արմատն ծառին, անտի՝ ի տեղոյն հարեալ առժամայն բիւէ ջուր իբր յաղբերէ՝ յատակ և բարեհամ, և ոչ թէ սակաւ, այլ յոլով և ընդ երկայն ժամանակ [բիւէ այլն], որ և ասի իսկ, եթէ ոմանք ծառք մի անգամ հարեալ յաղբոյ զամենայն գարունն աղբիւր բխեն» (էջ 37): Զնշված ու չնշված մասերի համեմատությունը և հատկապես վկայության սկիզբը՝ «Որ և զայս իսկ գրեմք, զոր ինձէն լուա ի հաւատալի և պատուելի արանց»¹⁶, ցույց են տալիս, որ Ռուսաստանում շատ տարածված և ռուսական ծառ համարվող կեղևն ու նրա հյուսիս վերաբերող այս հաղորդման հեղինակը Ներսես Պալիանենցն է: Ի տարբերություն գրական ճանապարհով վերցրածների, այս «հրաշքի» մասին տեղեկությունը նա ստացել է բանավոր՝ «հաւատալի և պատուելի» այրերից, որոնք գուցե Ռուսաստան (կամ Ռուսաստանի վրայով մոնղոլ խաներին) այցելած պապական քարոզիչ-դեսպանորդներն են եղել: Բանավոր աղբյուր են մատնանշում նաև հետևյալ տողերը. «Զայսմանէ ի դուրդս Հռոմայ հարցեալ ընդ հիմպեռնիացիս՝ արս արժանի հաւատալոյ, և ստուգապէս ասէին ճշմարիտ գոյ» (էջ 32): Նույն էջում կա մի այլ հղում ևս. «Այլ և զկատարեալ պատմութիւն ծակոյս քաւարանիս գտցես ի պատմութիւնն ասացեալ սրբոյն Պատրիկոսի»: Սա արդեն նշանակում է, որ Պալիանենցն օգտվել է լատինական հայսմավուրքից կամ վարք սրբոցից: Կարգադրածից և լսածից բացի, Պալիանենցը գրել է նաև իր տեսածը. «Ի թագաւորութիւնն ֆրանցիոյ է երկրի ինչ ի կողմն նորա, յորս ոչ թէ լուաք միայն, այլ տեսաք զոմանս մարդիկ ի նոցանէ, զի իբրև զշունս հաջէին և ոռնաին» (էջ 34):

Ասվածը, իհարկե, բավական է համոզվելու համար, որ «Դաւազանագրքի» մեջ մուծված «Յաղագս սքանչելեացն...» բնագիրը լատինական

¹⁵ Ամբողջական բնագրի վերարտադրելու դեպքում այստեղ ևս կարող էր դրսևորել իր վերաբերմունքը՝ գրելով, թե սուտ է և հաշմունք և այլն:

¹⁶ Սա ոճական մեծ նմանություն ունի Պալիանենցի հետևյալ տողերի հետ. «Արդ, իբր զսոյն գիրքս ես՝ Ներսէս Պալիանենց թարգմանէի ի քուրդս Հռոմայ և զայս իսկ հիացական իրս գրէի, պատմեցաւ յոմեմնէ իմաստնոյ և յարհիպսիկոսպոսէ և յայլոց պատուաւորաց արանց...» (№ 1578, էջ 178) և՛ «Արդ, զայս ես ինձէն տեսայ՝ գրող զրոցս Ներսէսս...» (№ 1578, էջ 64):

ղանաղան աղբյուրներից ներսես Պալիանենցի արած քաղաքությունն է։ Այս կարծիքն ամրապնդվում է մի այլ փաստով ևս. բնագրի վերջին՝ կիսով չափ գրված էջում Պալիանենցը զետեղել է մի ծանոթություն. «Գտի և այլ զարմանալիս՝ դրեալ վասն պրակմանեացն, որ են մարդիկ, զորս գրեմ ի յետի տետրն դրոցս. անտ զնայ գիտս Նայ և զորս այլ այսպիսիք գտանն, ի յետի տետրն կամիմ գրել կարգաւ» (էջ 38)։ Ձեռագրի այս տողերից պարզ երևում է, որ դրանք գրված են էջի նախընթաց մասից շատ ավելի ուշ և վերջինից տարբերվում են տառերի փոքրությամբ և տառագծերի նրբությամբ։ Պարզ է նաև, որ եթե նա այդ բնագիրը գտներ այն ժամանակ, երբ ձեռագրի հաջորդ էջերը մաքուր (չգրված) էին, ապա կզետեղեր հենց այստեղ, այլ՝ ոչ այնտեղ տետրում¹⁷։ Իսկ եթե ասում է՝ «գտի և այլ» և այդ «այլը» վերաբերում է վերջում գրվածին, ապա պետք է վստահ լինել, որ ծանոթությանը նախորդող բնագիրն էլ է «գտել»։ Այստեղից պարզ է դառնում նաև, որ Պալիանենցն իր թարգմանությունը որոշակի միտումով լրացնում-հարստացնում էր «Հրաշք-ների» նկարագրություններով։ Այժմ դառնանք բրահմաններին («Պրակամանեանք») վերաբերող և դրան հաջորդող երկու փոքր բնագրին, որոնք, իրոք, ինքնագրի «յետի տետրում» վերջին մամուլում են և զբաղեցնում են նրա վերջին թերթը (էջ 277—278)։ Առաջինի խորագիրն է. «Նորագոյն իրս և արմացք, որ կայ յերկրի՝ մարդիք Պրակմանք անուն» (էջ 277)։ Սկիզբն է «Պրակմանք են ժողովուրդք ի Հնդկիս և որպէս ասէ վարդապետն աշխարհականն պատմութեանց, ի Ռակման թագաւորէ, որպէս ասի յոմանց, այս անուամբ կոչեալք, որոց կացն և վարքն գրին ի թուղթն Տիտիմոսի առ Ալէսանտրոս, ուր այսպէս ասի...», իսկ վերջը՝ «Արդ, այս ամենայն, որ ասացան աստ զպրակմանացն, երեւին և դրին ի վերա մեկնութեան թղթոյ միոջ երանելոյն շէրօնիմոսի, զոր գրեաց առ Բաւլինոս քահանայն, որ սկսանի. «Համենայն եկեղեցական պատմութեանց», զոր մեկնեաց, ոմն՝ անուն Պրիդոն, ուր զայս ամենայն վերասացեալս գրէ անդ» (էջ 277)¹⁸։ Լատինական եկեղեցական մատենագրությանը վերաբերող գրականության պակասը թույլ չի տալիս ստուգել այս վկայությունները, և առայժմ ստիպված ենք ընդունել այն, ինչ ստվում է դրանցում. Պալիանենցն այս բնագիրը քաղել է Հերոնիմոս Մորիդոնացու՝ ոմն Պավլինոս քահանայի ուղղած թղթի¹⁹ մի մեկնությունից, որի հեղինակի անունը Պրիդոն է, իսկ Հերոնիմոսի (գուցե և Պրիդոնի) ազբյուրը եղել է ոմն Տիտիմոսի՝ Ալեքսանդրին ուղղված մի այլ թուղթ²⁰։

Երկրորդ բնագիրն է՝ «Դարձեալ և այլ հիանալի իրս և գոյացութիւնս աստուծոյ, զոր երանելին Օգոստինոս յիշէ ի գիրքն կոչեալ «Քաղաք Աստուծոյ» (էջ 278)։ Ինչպես տեսնում ենք, վերնագրում աղբյուրը՝ Օգոստինոս

¹⁷ Հետագա ընդօրինակողներից մի քանիսը (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2037, էջ 18բ—19բ, 7841, էջ 37ա—40բ, 2038, էջ 27բ—29բ) այդպես էլ վարվել են՝ բրահմաններին վերաբերող և դրան կից բնագրերը բերել են «Յաղագս սրանչիւնացն...» գործի մոտ և, բնականաբար, Պալիանենցի վերոբերյալ ծանոթությունը զեղչվել է։ Մատենադարանի № 4347 (էջ 28ա) և Վենետիկի Մխիթարյանների № 626 (էջ 37բ) ձեռագրերում բացակայում են և՛ բնագրերը և՛ ծանոթությունը, իսկ Երուսաղեմի ս. Հակոբյանց № 995 ձեռագրում (էջ 56) կա միայն վերջինը։ Եթե որևէ պատահականության պատճառով ստիպված լինեինք բավարարվել միայն առաջին երեք ձեռագրով, կկրկնվեր Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա թագավորների վերաբերող գործի օրինակը՝ հավելման հեղինակի հարցը կմնար չլուծված։

¹⁸ Այս տողերն ուղեկցվում են առանձին բառերի և արտահայտությունների մեջընդմեջ շնչումներով, որոնք շարադասական են և առաջացել են հենց գրելիս։

¹⁹ Հերոնիմոսի բազում թղթերի մասին տե՛ս Pottstast, I, p. 595—596.

²⁰ Առանց բնագրի մեջ խորամուխ լինելու Ռ. Աբրահամյանն այն համարել է XVIII դ. հայ հեղինակի գործ և հանգել թյուր բացատրությունների ու զնահատականի (տե՛ս Р. А. Абрамян, Армянские источники XVIII в. об Индии, Ереван, 1968, с. 21—22)։

Երանիու (354—430 թթ.) գլուխգործոց աշխատությունը նշված է ամենայն հստակությամբ: Այս ստվարածավալ գործի մեղ մատչելի հրատարակությունը²¹, ուր շեշտը դրված է ֆրանսերեն զուգահեռ թարգմանության վրա, գիտական չէ և զուրկ է ցանկերից, ուստի հայերեն թարգմանված հատվածների պարզումը մեծ դժվարության հետ է կապված: Բայց դա ինչորի երկրորդական կողմն է՝ էականը թարգմանության փաստն է:

Այսպիսով, կասկածից վեր է, որ ներկայացված բնագրերից վերջին երեքը Սարտինոսի գործի հայերեն թարգմանության մեջ մուծել է թարգմանիչը, և դրանք արգյունք են նրա որդեգրած ու որոշակի նպատակ հետապնդող սկզբունքի, իսկ վերջինիս էության պարզաբանման միջոցը հենց այդ նույն բնագրերի պարունակած նյութն է՝ նկարագրված «հրաշքները» և դրանց բովանդակությունը: Մակեդոնացուն և նրա թագավորներին վերաբերող մասում, իրոք, կան հրաշքներ, որոնց Պալիանենցն էլ չի հավատում՝ մի այլ տեղում գրելով. «Եւ այս ևս երեւի սոսո գոյ» (էջ 29, սրբագրման ժամանակ սա էլ է ջնջվել): «Յաղագս սքանչելեաց»-ի մեջ նույնպես կան առասպելներ, բայց այստեղ գերակշռողն այլ բնույթի «հրաշքներ» են. հիմնականում բնությունն է՝ իր զանազան տարրերով (մարդիկ, կենդանիներ, բույսեր, քարեր, ջրեր և այլն) և դրանց դրսևորումներով, որոնք դեռևս անբացատրելի էին ժամանակի գիտական մտքի համար: Օրինակ. Սամարիայում գտնվող մի աղբրի ջուրը (4) անգամ ի տարողն Դ (4) գոյն դառնա (ջուր աղբերն այն), այսինքն՝ կանաչ, կարմիր, փոշոլ գոյն և ծիրանի: Եւ իբր փոփոխին ի գոյնս յայսոսիկ, ամենայն տեսողացն բարի և ախորժ թվին յաշս և ոչ զաղբալիս: Կարծելի է, եթէ ի Դ (4) եղանակն փոխի Դ (4) գոյնն» (էջ 35): Այս «հրաշքն» ըստ էության հնարավոր է, իսկ նրա բացատրության Պալիանենցի երկշոտ փորձը կարող է լինել հավանական տարբերակներից մեկը: Նման օրինակները կարելի է բազմապատկել, բայց առավել կարևորը Կիլիկիային վերաբերողներն են, որոնցից Հարունի դոյակի մոտ գտնվող մի ջերմուկի և Անարզաբային մոտիկ մի լճակի ջրի նկարագրությունները (էջ 35—36) հրատարակված են²²: Իսկ քաղերի մասին «հրաշքներ» թվում նախապես եղել է նույն Կիլիկիային վերաբերող մի կարևոր հաղորդում ևս, որն անհասկանալի պատճառով Պալիանենցը ջնջել է. «Այլ և է իսկ ի Կիլիկիա՝ մերձ դղեկին Լամբրոնին, ի յանապատի միոջ, որ կոչի Զրուակայի անապատ, և ||| ի յագոջն և արոտաքոյ ևս է երակ գետնի, յորում տեղոջ գոյ հազարք հազարաց տրամբար բոլոր իբրև զարթակաղին և այլ ևս մանր և մեծ, բայց ձևն ամենեցուն բոլոր է: Իսկ իբր որ կոտրէ զայն տրամէքարեա կաղինն, ի միջին է նմանապէս բոլոր կայծքար յոյժ կարծր և յոյժ հրատու: Ահա ապա զի բնութիւն տարրին շինեն զայսպիսիս՝ որպէս և տրամ բոլոր քարն շապկել է զկայծքարն՝ իբրև փուրն զընկոյզն» (էջ 33). ինչպես տեսնում ենք, սա ևս հրաշք չէ:

Բրահմանների մասին բնագիրը կատարյալ հասարակության համար բաղձանքների մի արտահայտություն է և նման է ավելի ուշ շրջանի ուսուպիստական գրականությանը. հետևաբար և հրաշապատումների հետ քիչ ընդհան-

²¹ «La Cite de Dieu de Saint Augustin, Traduction nouvelle par L. Moreau, 3e edition avec le texte latine», t. I—III, Paris, 1853—1854. Օգոստինոսի գործերի մատենագիտությունը տես՝ Potthast, I, p. 422—423 և «Repertorium Fontium Historiae Medii Aevi», t. II, Fontes A-B, Romae, 1962, p. 422—423.

²² «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 176, Բ. [Կյուլեեսերյան], Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո աղագային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961, էջ 204—205: Բծիշկ Վ. Թորգոմյանն այս հաղորդումների մասին հանգել է այն թյուր եզրակացության, թե Պալիանենցը Կիլիկիայի ջերմուկներին նվիրված աշխատություն է ունեցել, որն այժմ կորած է (V. Torkomian, Un coup d'Oeil sur l'histoire de la médecine en Arméno-Cilicie. Revue des Etudes Arméniennes, t. VI, f. 1, Paris, 1926, p. 25).

րություն ունի: Հրաշք չկա նաև վերջին բնագրում, որտեղ ևս նկարագրված են դեռևս չբացատրված բնական երևույթներ:

Այժմ փորձենք պարզել, թե Պալիանենցն ինչի՞ց գրգված պետք է իր թարգմանությունը լրացնենք—«համեմներ» այսպիսի բնագրերով: XIII դ. եվրոպական պատմագրության մեջ սկսվում է գրվածքը հետաքրքիր դարձնելու մի ձգտում, որի շնորհիվ ժամանակագրությունների մեջ աստիճանաբար մեծ ծավալ են ստանում առասպելները, առակները և շրջիկ անեկդոտները: Նորամուծությունն այնքան է զարգանում, որ XIV դ. Ֆրանսիացի լավագույն ժամանակագիրներից մեկը, որ հայտնի է «Սեն-Դենիի վանական» անունով²³, հայտարարում է, թե իր նպատակը ընթերցողին «միայն հետաքրքրելը և լսողության համար հաճելին» պատմելն է²⁴: Առանձնապես հետաքրքիր է, որ XIV դ. պատմագիրներն սկսում են «գարմանքի արժանի տեղեկություններ» քաղել ոչ միայն անտիկ հեղինակների երկերից, այլև՝ «սուրբ երկիր» վանացած ուխտավորների պատմածներից՝ և, հատկապես, Արևելքում եղած վաճառականների ու պապական քարոզիչների ուղեգրություններից: Այս շրջանում Արևմուտքի և Արևելքի միջև աշխուժացած վաճառականական-քարոզչական հարաբերությունների շնորհիվ եվրոպացի պատմագիրների ձեռքին նմանօրինակ նյութեր ավելի շատ կային, քան նախորդ դարում, երբ այդ հարաբերությունները նոր էին սկսել պատահականից ծրագրվածի վերածվել: Հենց այս ժամանակներից սկսած եվրոպացիների միտքը սեփական է հեքիաթային Հնդկաստանի գեոտերում և լճերում լողացող ձուլ ոսկու կտորների վրա, որոնց մասին Պալիանենցը ևս գիտեր. «Այլ և գոյ յաշխարհն Արևելից գետ իմն, որ ասի, թէ կոտորս ոսկույ իբր զձեռագործ և ձուլածոյս գտանին ի նայ՝ ի ջուրն և յեզրն ևս» (էջ 35): Տարօրինակ չէ, որ նույնիսկ ամենաարժանահավատ ժամանակագիրների (Գոտֆրիդ Վիդերպացի, Մատթեոս Փարիզեցի, Ռոջեր Ուենգովեր և ուրիշներ) երկերը ևս լցվում են հրաշքներով²⁵, նույն դարի կեսերին գրված Բոկաչչոյի հանրահայտ «Դեկամերոնը» կոչված էր բարձրաշխարհիկ հասարակությանը հետաքրքիր և զվարճալի ընթերցանության նյութ մատակարարելու համար: Ժամանակագիրների «հետաքրքիր և ընթերցվող» երկերը ևս հասցեագրված էին այս խավերին, ուստի հասկանալի է, թե ինչու էին նրանք նշված կարգի աղբյուրներից քաղում հիմնականում «ազգագրական-աշխարհագրական» հրաշքներ, որոնք վերաբերում էին մարդկանց և նրանց բարքերին, կենդանիներին, բնությանը և այլն: Նկատենք, որ քիչ հրաշքներ չկան և հայ մատենագրության մեջ, հետևաբար դրանք պետք է համարել միջնադարյան աշխարհայացքային երևույթ և ընդունել, որ այդ դարաշրջանում մարդկանց բնագիտական գիտելիքների ու պատկերացումների մի մասը ձևավորվում էր այսպիսի գրվածքների շնորհիվ:

Սրբերի հրաշագործությունների նման՝ այս հրաշքները ևս մարդկանց մեջ աստվածավախություն առաջացնելու նպատակ ունեին: Տեղին է վկայակոչել Օ. Վայնշտեյնի դիպուկ խոսքը. «Վանականի համար որևէ հրաշքի նկատմամբ կասկածն ընդհանրապես հավասարազոր է քրիստոնեական ուսմունքի նկատմամբ կասկածին»²⁶: Ուրեմն, այդ վանականներից, որոնք և ստեղծել են համարյա ողջ միջնադարյան գրականութունը, այսօր՝ չենք կարող պահանջել չհավատալ այսպիսի մի հրաշքի. «Արդ, է իսկ յաշխարհի աղբուր, զորոյ զջուրն երբ շողացուցանեն, եթէ ոք այնուիկ շողջրովն զաշն թանա, ճանաչէ զգողն և յանդիմանէ, [կաբժեմ, եթէ նշան ինչ ահուագէ զգո-

²³ Նրա մասին մանրամասն տե՛ս Н. Н. Мелик-Гайказова, Французские хроники XIV в. как историк своего времени: общественно-политические взгляды, М., 1970.

²⁴ Հմմտ. О. Л. Вайнштейн, Западноевропейская средневековая историография, М.—Л., 1964, с. 101:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 90:

դուրսենէն, զոր արաբեալ է]: Իսկ եթէ գողն [պապութեան կողպատիչ իցէ, յոր (ժամ] եկեղեցոյ իր իցէ գողացեալ և կամ այլ սուրբ իր, և յորժամ յանդիմանէ զնա այն, որ զաշսն ունի թացեալ, և նա իսկ գողն ուրանա՝ եթէ չնմարարեալ, եթէ ոք ի նոյն ջրոյ յաշսն նորա հասուցանէ, կուրանա բնաւին գողն: Սակայն եթէ ի վերա ումեք զուր դնի և պարտաւորի սրբութեանց կողպատիչ գու, երբ թանան զաշսն ի նոյն ջրոյն, առաւել պայծառանա տեսութիւնն, քան զոր էրն» (էջ 35): Աղբյուրի գտնվելու տեղի հնարավոր ամենամեծ անորոշութիւնը (սլաշարհի) և Պալիանենցի շնչումները պատահական չեն. պարզ է նաև, որ վերջիններս լատիներեն հիմքից չեն բխում: Բայց կարևորն այն է, որ այս հրաշագործ ջրի գոյութեան մասին իմացող ցանկացած հավատացյալ (միջնադարի մարդը) սարսափով ետ կկանգնէր եկեղեցական (պապական) գույքի գողութեան մտքից: Վանականների մասին խոսելն արդեն ավելորդ է: Եվ ահա, սրբոց հրաշագործութիւնների հետ միասին, ազգագրական-աշխարհագրական հրաշքները ևս աստվածավախութիւնն արթնացնելու որոշակի նպատակ ունենին նաև այն պատճառով, որ դրանք էլ «աստծու գործերն» էին և մարգկային քննութեան ենթակա չէին: Պալիանենցը միայն մի տեղ փորձել է ընդլզել. «Արդ, աներկբայապէս հաւատալի է, զի ամենայն ինչ աստուծոյ և սրբոց նորին կարելի գոյ, բայց ըստ արկածից իմաստասիրացն, նա ևս որք զիրս բնականս գտեալ են, թուի ընտելին ջրին այնմ աղբերն և հողոյն սահմանացն այն, որք բերէին զօծս ի ցամաքի, առնեն և զայն ևս ի ծովու» (էջ 33): Սա, իհարկե, աստծուն ժիտելուց շատ է հեռու, բայց բանական բացատրութեանը մոտ է:

Այսպիսով, պարզվում է, որ Մարտինոս Օպավիացու «Գաւազանագրքի» հայերեն թարգմանութեան մեջ մուծված «հրաշքներն» մեծամասնութիւնն իրապատում աշխարհագրական-ազգագրական են: «Յաղագս սքանչելեացն...» բնագիրը Պալիանենցի կազմածն է. նրա աղբյուրները բազմազան են՝ բանավոր և գրավոր: «Նորագոյն իրս...» և «Գարձեալ և այլ հիանալի իրս...» մանր բնագրերը ևս որոշակիորեն հայտնի աղբյուրներից նրա նախաձեռնութեամբ արված քաղվածական թարգմանութիւններ են: Այս փաստերը հավանական են գարձնում Պալիանենցին համարելու նաև Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա «գերած» 22 թագավորներին վերաբերող բնագրի քաղագրող-թարգմանիչ-մուծող: Անկասկած է նաև, որ Մարտինոսի երկից և նրա հստակ ծրագրից արված այս շեղումը XIV դ. Եվրոպայի պատմագրական ճաշակի ու նորամուծութեան արտացոլումն է և ազդեցութիւնը, որին շէր կարող չենթարկվել տասը տարուց ավելի այնտեղ ապրած հայ թարգմանիչը: Ի վերջո, այս մուծումները հայ իրականութեան մեջ ևս ինքնանպատակ չէին և գտան իրենց ընթերցողին²⁷:

«ЧУДО»-СКАЗЫ В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ «ХРОНИКИ» МАРИНА ОППАВСКОГО

ЮРИЙ ВАРДАНЫАН

Резюме

В арменистике перевод труда М. Оппавского подвергался критике из-за описанных в нем многочисленных чудес, представленных в основ-

²⁷ Այդ մասին վկայում է հայերեն «Գաւազանագրքի» պահպանված երկու տասնյակից ավելի ընդօրինակութիւնների գոյութեան փաստը:

ном в виде отдельных маленьких текстов, которые, как выясняется, отсутствуют в латинском подлиннике. Первый из них происходит, по-видимому, от латинского оригинала, имевшегося у переводчика, второй же был составлен переводчиком Нерсесом Палианенцем на основании различных письменных и устных источников, а также собственных наблюдений. Третий текст извлечен из толкования одного послания Иеронима Стридонского к иерею Павлиносу, а последний — из труда Аврелия Августина «О граде божьем».

В этих текстах в качестве «чудес» представлены большей частью явления природы и окружающей среды, которым средневековая наука не находила объяснений. Сконцентрирование подобного материала в армянском переводе «Хроники» Мартина Оппавского является отражением господствующей в европейской историографии (и вообще литературе) XIII—XIV вв. тенденции—предоставить занимательное чтение широким кругам читателей.